

**ՅՈՒՐԵԼԵԱՆՆԵՐ**

**ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ 60-ԱՄԵԱԿ**

**ՀՈԳԵՆՆՈՐՀ Տ. ԺԻՐԱՅՐ Ծ. ՎԱՐԳԱՊԵՏ ԹԱՇՃԵԱՆԻ**

Ծնած է Զահլէ՛ Լիբանան 18 Դեկտեմբեր, 1935-ին: Նախնական կրթութիւնը ստացած է Պէյրութի Ազգային Սահակեան Բարձրագոյն վարժարանին մէջ: 1952-ին ընդունւած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դպրեվանքը: Երկու տարի վերջ, 1954-ին դիմած եւ ընդունուած է Ս. Աթոռոյս Ժառանգաւորաց վարժարանը իբրեւ ուսանող: Վարժարանի ընթացքը ավարտելէ ետք, 1957-ի Օգոստոսին, Ս. Աստուածածնի Վերափոխման տօնին, ձեռնադրուած է Սարկաւազ՝ Տ. Տիրան Արքեպս. Ներսոյեանի ձեռամբ: Ապա հետեւած է Ընծայարանի եռամեայ դասընթացքներուն: 1960-ի Փետրուարին, ձեռամբ Տ. Սուրէն Արքեպս. Քէմհաճեանի ձեռնադրուած է կուսակրօն Քահանայ:

Ձեռնադրութենէն ետք քառասունքի, եւ Սբ. Յարութեան Տաճարէն ներս իր ծառայութենէն յետոյ, Նորընտիր պատրիարք Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեանի հրամանաւ եւ Տնօրէն ժողովի որոշումով նշանակուած է Սբ. Յարութեան Տաճարի տեսուչ, յաջորդելով Տ. Լեւոն Աբեղայ Աբէլեանի:

1961-ի Հոկտեմբերին, Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ Տ. Սիրոն Արքեպս. Մանուկեանի կարգադրութեամբ նշանակուած է Գանատայի Թորոնթօ քաղաքի նորակազմ համայնքի Սբ. Երրորդութիւն եկեղեցւոյ հոգեւոր հովիտ:

1967-ին ձեռամբ Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեանի ստացած է Մասնաւոր Վարդապետութեան չորս աստիճաններ, իսկ 1968-ին, Մոնթրէալի հայոց եկեղեցւոյ մէջ Ամենայն Հայոց Հայրապետ՝ Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի ձեռամբ ստացած է լանջախաչ կրելու իրաւունք՝ մասնաւոր սրբատառ կոնդակով:

1975-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ հետեւած է վերապատրաստման Բանասիրութեան դասընթացքներուն: Երեք ամիս ետք Վազգէն Վեհափառի քաջալերութեամբ եւ Եւրոպայի Հայրապետական Պատուիրակի տնօրինութեամբ ստանձնած է Իտալիոյ Միլանոյ քաղաքի Սբ. Քառասուն Մանկանց եկեղեցւոյ հոգեւոր հովուութիւնը, երկու տարուան կարճ ժամանակով՝ 1975-1977:

1977-ի աշնան վերադարձած է Հիւսիսային Ամերիկայ: Օրուան Առաջնորդ Տ. Թորգոմ Արք. Մանուկեան նշանակած է զինք Շիքակօյի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիտ: Քառամեայ պաշտօնավարութէնէ ետք, Փարիզէն՝ Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ՝ Տ. Սերովբէ Արքեպս. Մանուկեան ետ կանչած է զինք, եւ 1982 Փետրուարէն առժամեայ հանգամանքով իրեն վստահուած է Փարիզի Սբ. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցւոյ հոգեւոր հովուութիւնը՝ միաժամանակ վարելով Մայր Եկեղեցւոյ գրադարանի դասաւորման աշխատանքները:

1990-ին, Երջանկայիշատակ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեան իր Գահակալութեան վաղորդայնին Մայրագոյն Վարդապետութեան 10 աստիճաններ շնորհեց Հոգեշնորհ Տ. Ժիրայր Վարդապետի:

Հայր Սուրբի անձնական նախաձեռնութեամբ Քրիստոնէութեան 1700-ամեակին նուիրուած Մատենաշարով եւ իր համեստ միջոցներով լոյս ընծայած է Կրօնական պարբերականներու մէջ ցրուած աշխատասիրութիւններ, ինչպէս նաեւ առանձին պրակներով հրատարակած է հետեւեալ մենագրութիւնները.

1. Այվազեան, Հ. Գաբրիէլ Վ., «Դասատետր Մեկնութեան Խորհրդոյ եւ Արարողութեանց Սրբոյ Պատարագի», 2003:

2. «ՅՈՒՆՅ Գիրք»-ի տաղաչափեալ Աշխարհաբար թարգմանութիւն Տ. Թորգոմ Արքեպս. Գուշակեանի, 1997, քաղուած «Հայ Խօսնակ» կրօնաթերթէն, Կ. Պոլիս:

3. Տ. Գարեգին Արքեպս. Տրապիզոնի, Հովուական Խօսքեր, 2005, քաղուած «Քառամեայ Պաշտօնավարութեան» գրքուկէն, 1932, Գալիֆորնիա:

4. Տ. Փառէն Եպս. Մելքոնեանի Բաղդատական Հայկ. Չորս Պատարագամատոյցներու Աշխատասիրութիւնը, քաղուած ՀԱՍԿ կրօնաթերթէն:

5. Տիրան Արք. Ներսոյեանի «Համառօտ Մեկնութիւն Պատարագամատոյցի», 1999, քաղուած «Շողակաթ» կրօնաթերթէն, Կ. Պոլիս:

6. Տ. Թորոս Քահանայ Զուղահեցիի «Աւանդութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ», 2001, քաղուած «Հայ-Եկեղեցի» կրօնաթերթէն:

7. ՊԱՏԱՐԱԳ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ, 2010:

2016-ի Հոկտեմբերին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ մասնակցած է Գրադարաններու Միջազգային Չորրորդ Համագումարին եւ այս առթիւ յատուկ Զեկոյց մը տուած է Փարիզի Հայոց Մայր Եկեղեցւոյ գրադարանին մասին:

«Սիրոն» յանուն Նորին Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ բովանդակ Միաբանութեան, կը շնորհաւորէ Հոգեշնորհ Յոբելեարի Քահանայական Զեռնադրութեան Վաթսունամեակը, եւ կը մաղթէ քաջառողջ կեանքի երկար օրեր:

**ԽՄԲ.**

